ԲԱԿՈՒՆՑԻ ՄՈՒՏՔԸ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ա. Գ. ՉԱՔԱՐՅԱՆ

Հին խոսք է՝ յուրաքանչյուր իսկական գրող ունի իր աշխարհը, և այդ աշխարհի անսանկյունից է ներկայացնում իր ժողովրդին, նրա կյանքը։ Այդ աշխարհը ձևավորվում է ժողովրդի բախտի որոշակի իրադրության մեջ, որը որպես ոգի, որպես էություն արտահայտվում է գրողի ստեղծագործության մեջ, որոշում գրողի ոճին, նրա ստեղծագործական կետ-նպատակը։

Հայ գրականության և կուլտուրայի գործիչների մի ամբողջ սերունդ, այդ թվում և Ակսել Բակունցը, ապրել է բացել հայ ժողովրդի վերջին օրհասին, երբ ժողովուրդը բնաջնջվում էր և ասես, պետք է դադարեր գոյություն ունենալուց։

Այդ պայմաններում են ամենագիրիչ երազն ու սիրուհին նույնանում Հայրենիք հասկացողության հետ, լուծվում նրա մեջ, այդ մղձավանջից է ծնվում աստանդականի տագնապն ու թախիծը Վ. Տերյանի և Ե. Չարենցի պոեզիայում, այդ օրերին են սնունդ առնում Ակ. Բակունցի գրական առաջին փորձերի («Աշուն», «Հոգոթք», «Անտառում») երկմտանքն ու խռովված մարդու, խռովված բնության մորմոքը։

Սակայն ինչպես իր դարավոր պատմության բոլոր օրհասական պահերին, այս անգամ էլ է պրկվում հայ ժողովուրդը, բայց արդեն ուսոլյուցիոն հորձանուտի մեջ. կրկին ընթացք է առնում նրա կենսունակությունը՝ հաստատելու համար իր հոգևոր ուժը, գոյության իրավունքը արևի տակ։

Այդ պրկումից է ծնվում արևին հասնելու չարենցյան տենչանքը, այդ պրկումից և այդ պահին է ծնվում նաև բակունցյան անհագուրդ սերը հայրենի երկրի և ժողովրդի հանդեպ։ Սեր, ակնածանք հարազատ ժողովրդի տոկունության, հոգևոր դեղեցկության հանդեպ, որն ի վերջո դառնում է նրա ողջ ստեղծագործության առանցքը։

Մի կողմից պատմական ամենաանարդար ճակատագիր, մյուս կողմից մարդկային այնպիսի բնավորություններ, որոնց չի կարող ծնկի բերել, մարդկայնորեն նվաստացնել ու բանտել անգամ ամենախարդախ ճակատագիրը։ Ազգային, սոցիալական, մարդկային ճակատագիր, որի համար, թվում է, ավելի բնորոշ համեմատություն չես գտնի, բացի «Մթնաձորը»։

«Մթնաձորը» Բակունցի մուտքն է գրականության մեջ՝ հաստատուն, իր ակունքներով օրինաչափ։

Մթնաձորից, մթնաձորով թեակոխեց հարազատ ժողովուրդը նոր կյանք, նոր աշխարհ, և Բակունցը ընթացավ նրա հետ. շարունակեց նրա տարեգրությունը դառն ու ողբերգական, էպիկական նոր սկզբի իրական շնչով և երանգներով, մշտապես մնալով հավատի իր դեղարվեստական բոլոր վկայություններում։

«Միրհավ», «Լաո Մարգար», «Ալպիական մանուշակ», «Խոնարհ աղջիկը», «Մթնաձոր», «Չարքը», «Գյուլբահարի համար», «Միրանի տափ», «Մրոց» — սրանք գործեր են, որոնց մեջ խտացված է ժողովրդի կյանք և հոգեբանություն։

Պատմվածքից-պատմվածք, պատկերից-պատկեր հյուսվում են մարդկային տարբեր ճակատագրեր՝ յուրովի դժբախտ կամ անզոր, յուրովի տոկուն ու համառ։ Բայց, որքան էլ տարօրինակ թվա, Բակունցի ստեղծագործության համար էական է ոչ միայն այս տարբերությունը։

Այստեղ է ահա, որ Բակունցի ստեղծագործությունն իր ակունքներով ուղիղ գծով մոտենում է հայ բանաստեղծության տրադիցիաներին և ամենալավագույն իմաստով հայ արձակի մեջ բերում նոր հատկանիշներ, հարստացնում այն։

Հայտնի է, որ համաժողովրդական աշխարհազգացման խտացման իմաստով կլասիկ արձակը չհասավ պոեզիայի թումանյանական և իսահակյանական բարձունքին։ Չհասավ, բայց այդ էր նրա զարգացման ճանապարհը, և Ակսելը իր առաջին իսկ ժողովածուով ընթացավ այդ ճանապարհով։

«Մթնաձորով» հայ արձակի մեջ հաստատապես մուտք գործեց այն անիմանալի, անբացատրելի երակը, թելը, որով մեծ Թումանյանի խորապես տարբեր, խորապես ինքնատիպ հերոսները իրար են գալիս, հավաքականանում՝ նշանավորելով համաժողովրդական աշխարհազգացում, ազգային հոգեբանություն։

Այստեղից՝ բակունցյան արձակի առանձնահատկությունները տրադիցիոն արձակի համեմատությամբ։ Թեթևանում է ներհակությունների և դավերի բեռը երկում, փոխվում է կերպարների՝ դրական և բացասական, հարաբերակցությունը, նրանց փոխհարաբերությամբ, հակազդող գործողություններով հոգեբանություններ բացահայտելու ավանդական սիստեմը։ Մարդ (դրական) և մարդ(բացասական) հարաբերակցությունը մղվում է երկրորդական պլանի վրա։ Առաջին պլանի վրա երևան է գալիս մարդ և աշխարհ, մարդ և մարդկային ճակատագիր հարաբերակցությունը, որտեղ հոգեբանություն արտահայտելու հիմնական ծանրությունը կրում է նույն այդ մարդը՝ իր վերաբերմունքով աշխարհի, նրա բազմազան չարի ու բարու, նրա ամենատարբեր երևույթների նկատմամբ՝ ամենատարբեր պարագաներում։

Ավելի կոնկրետ ասած՝ հայ գյուղացի և աշխարհ. աշխարհ իր ամենալայն իմաստով, արտաքին հայացքից հայ գյուղացու հետ ոչնչով չառնչվող ամենարազմապիսի ոլորտներով, իրադարձություններով։ Հայ գյուղացի և ընդարձակ աշխարհի իրադարձություններով պայմանավորված հայ գյուղացու ճակատագիր, վերաբերմունք, աշխարհազգացում, գեղարվեստական, կառուցվածքային առումով ճիշտ նույնպիսի հարաբերակցությամբ, ինչպես առնչվում, հարաբերվում է, ասենք, գյուղացի Համբոյի ընտանիքը անիրավ աշխարհին։ Կյանքի, ճակատագրի, հոգեբանության, վարքագծի բոլոր նրբերանգներով. բոլոր մանրամասներով, այդ մանրամասների ներդաշնակ ամբողջականությամբ։

Այս է բակունցյան լավագույն պատմվածքների, ոչ միայն «Մթնաձորում» տեղավորված, այլև նրանից հետո ստեղծված՝ «Նամակ ռուսաց թագավորին», «Սպիտակ ձին», «Եղբայրության ընկուզենիները»,— կառուցվածքային սիստեմը, գեղարվեստական էությունը։

Լառ Մարգար՝ նրա ճակատագիրը աշխարհքի ճամփեքին, առանց դրական կամ առավել ևս բացասական որևէ միջնորդի, լառ մարգարյան աշխարհրմբռնում։ Արթին պապ, նրա և նրա ընտանիքի ճակատագիրը՝ աշխարհի ամենամերձավոր և հեռավոր անկյուններից եկող ազդակներով, այդ ազդակները՝ չար ու բարի, իր բոլոր նյարդերով, վարքագծի բոլոր նրբերանգներով անդրադարձնող Արթին պապի հոգեբանություն, աշխարհազգացում։

Ավելի պարզ պատկերացնելու համար բակունցյան գործերի այս կառուցվածքը, դիմենք «Մթնաձորի» առանձին գործերին։

Ավանդական իմաստով համարյա արտաքին գործողություն չունի Բակունցի «Մթնաձորի «չարքը» պատմվածքը։ Քաղաքից եկած կնոջ և Սաքանի միջև այստեղ չես գտնի շոշափելի փոխհարաբերություն, հակազդող աշարք, գործողություն կամ բախում։ Կա քաղաքից եկած կին և նրա հանդեպ Սաքանը, ինչպես ասենք կան լեռներ, անդնդախոր ձորեր և դրանց մեջ լոռեցի Սաքոն՝ Թումանյանի պոեմում։ Պատմվածքի իմաստային ողջ գործողությունը մարմնավորում է Սաքանը՝ հանդիպակաց օբյեկտն զգալու իր կարողությամբ, իր հոգևոր ներխուժումով։

Ծավալվում, բորբոքվում է Սաքանի վերաբերմունքը, և պապերի պատմած չարքերի կերպարանքն է ընդունում քաղաքից եկած կինը՝ կրնկակոխ հետապնդող, անրջային և արբեցնող։ Սեր չէ նրա ապրածը, որ միշտ էլ նշանակում է ոչ սովորական վերաբերմունք, նրա զգացածը վեր է ամեն մի հատիշտակությունից, սիրուց։ Խելահեղ մի արբեցում է դա, նման հարևան ծերունու պատմածին, երբ ձորի գլխին չարքերը հետապնդել են նրան, և ինքը խելագար վազքով ոչ մի կերպ և ոչ մի տեղ չի կարողացել ազատագրվել նրանցից։

Տարբեր է սիրուց, սիրահարված մարդու հոգեբանությունից, ինչպես տարբեր է, այլ է Սաքոյի խելագարությունը բնության ամենաոգեշունչ ընկալումից։ Այդ տարբերությունն էլ ահա հենց այն է, ինչ Սաքանի ապրածը սիրո հոգեբանությունից դարձնում է աշխարհազգացում. աշխարհազգացում իր բոլոր բարդ հանգույցներով, իրարամերժ տարրերով և ներդաշնակությամբ։

Չհասկացված բնություն, և ահա չարք է այն մարդու՝ Սաքոյի համար, որ դյութում է, տանում ու կործանում։ Չհասկացված քաղաքակրթություն, քաղաք, քաղաքի մարդ՝ չարք է թվում Սաքանին, անհասկանալի, անհասանելի, նույնիսկ վիրավորող, բայց և անրջորեն ցանկալի, ցնորքի պես դյութող։

Երկարամյա թշնամանքից հետո՝ անհասկանալի, բայց անրջորեն ցանկալի. այս աստիճանին էր հասցրել սովետական մի քանի տարիների կյանքը հայ գյուղացու վերաբերմունքը քաղաքի նկատմամբ։ Այդ առաջին հերթին նշանակում էր հայ գյուղացու ուժ, նոր, անծանոթ աշխարհներ

նվաճելու հոգու խոյանք, և Ակսելը հաստատում է այդ ուժը, հաստատում է յուրովի՝ համոզված, բայց խանդաղատանքով։ Խանդաղատանք այն բանի համար, որ այդ ուժը մի տեսակ անհնարին հրաշք է խոշտանգված հայ գյուղացու վիճակում, բայց այդ կա և այն էլ՝ այդ օրինակ առինքնող առնականությամբ։

Հեղինակային ընդգծված վերաբերմունք իր հերոսների ճակատագրի նկատմամբ. գերազանցապես սեր, խանդաղատանք, ակնածանք հայ գյուղացու, հայ ժողովրդի կենսունակության հանդեպ։ Այս էլ արդեն Բակունց արվեստագետի մեկ այլ հատկանիշն է դարձյալ հայ պոեզիայից սերած, նրա ստեղծագործությունների կառուցվածքից բխող, այդ կառուցվածքը պայմանավորող։

Այդ վերաբերմունքով է մարդու ճամփա անցած Լառ Մարգարը ջրի կարգ պահպանողի իր ամենաառօրյական զբաղմունքի պահին ստանում գյուղացնական կերպարանք, իր արդարամբարությամբ Դավթին հիշեցնող, ասես Դավթի զարմից։ Դրանով է Խոնարհ աղջիկը՝ հայ հասարակ գեղջկուհին, բաղհանի տանջալից պահին ոգիանում, չթե զգեստով և գլխաշորով զառնում անրջային արարած՝ դյութիչ ու գերող, այնքան բանաստեղծական, որ, ասես, նրա շրթերին է հյուսվում կոմիտասյան երգը։

Խոնարհը Բակունցի սերն է՝ անմոռանալի, անաղարտ։ Սեր, որ արժանապատվությամբ է մաքերվում նույնիսկ այն դեպքում, երբ Խոնարհից մնացել էր միայն աչքերի փայլը, երբ, կարծես, նա բոլորովին զրկվել էր բանաստեղծական վաղեմի շուրից և դարձել սոսկ իր երեխաների համար ողբալով հաց աղերբող կին, մայր։ Այդ սիրով Ակսելը, ասես, նորից է վեճի բռնվում «Ալպիական մանուշակի» իր Հերոսի՝ նկարչի հետ, որը նկարեց հայ գեղջկուհուն՝ մանիշակագույն աչքերով, օջախի առջև շորած։ Նկարեց, որովհետև գեղջկուհին հիշեցրեց նրա վաղեմի սիրած կնոջը՝ հովանոցով, թավշե գլխարկով, վրեն փետուրներ։ Հիշեցրեց, և միայն դրա համար նկարեց նկարիչը։ Մինչդեռ Խոնարհը հենց իրեն պատմողի, Բակունցի սերն է. ոչ որի նա չի հիշեցնում, իրենից բացի, և այդ նույնիսկ իր կյանքի ամենաողբալի, ամենաստորացուցիչ պահին, իր նախկին և առկա վիճակի ամենածայրահեղ հակադրության մեջ։

Եվ վերջապես Ակսելի վերաբերմունքով է այդքան թրթռուն Դիլան դային («Միրհավ»)։ Կյանքի հետ դեմ առ դեմ, և կյանքն իր օրենքով ուր որ է պիտի հաղթի նրան. ոտքը մյուս աշխարհում, ստիպված է փակել հաշիվները այս աշխարհի հետ։ Եվ ահա վերհիշում է Դիլանն իր կյանքը, վերհիշում է փակելու համար այն։ Փակում է, բայց ասես նոր է սկսում. ավելին. ասես Փարվանա հրաբորբոք կտրիճներից է ինքը. պացել է բերելու անշեջ հուրը, բերել է, ձեռին է, բոցկլտացող ու վառվռուն, և ահա ուր որ է պիտի պարզի, և չկա սիրած Սոնան։ Մամռոտել է Սոնայի գերեզմանաքարը, բայց աշխարհը մի ակնթարթում դառնում է Սոնա, լցվում նրա հմայքներով՝ կախարդիչ ու արբեցնող։ Ասես հիմա, հենց հիմա է խնդրում Սոնային խնայել իրեն, ասես հիմա, հենց հիմա է ուրիշի կին դարձել Սոնան, և իր աչքը մնացել է նրա ճամփին։ Կարծես 80-ամյա Դիլանի համար է ասված՝ «սերը անհագ սովի պես...»

80-ամյա Դիլան և այդքան անհագ սեր. հակադրություն նույն մարդու մեջ, նույն մարդու հոգու և վիճակի միջև, և տարածվում է իր բազմերանգությամբ ու խաղերով անընդգրկելի մի տրամադրություն, նույնքան անընդգրկելի և ներհակ, որքան կյանքն ու մահը, նույնքան անբընեելի ու բազմախորհուրդ, որքան կյանքի սերն ու մահվան ողբերգությունը։

Կյանքը՝ պաշտած կին է Դիլանի համար, պաշտած, բայց ուրիշի կին դարձած Սոնա, հավերժորեն սիրելի, երազորեն տենչալի։ Կյանքը միրհավն էր իր երգով՝ կախ-կղա, շախ-կղա, որ որսացել էր ուրիշը, և Դիլանին թվացել էր, թե ինքն էր որսացողն ու որսաուրը. թե՞ հակառակն էր՝ վիմացավ Դիլանը։ Կյանքը սեր էր, երազ, ավելի ցավ ու սպասում, և գիտե, և չգիտե կյանքը Դիլանը, իսկ մա՞հը...

Իսկապես «աննյութեղեն» գործ—դիպուկ է գալ Չարենցը. գործ, որի ծննդաբանությունը. ազգակցական կապերը եթե փնտրելու և պարզելու լինենք, նորից կկանգնեն մեծ Թումանյանն ու Իսահակյանը՝ համաժողովրդական աշխարհազգացման իրենց անընդգրկելի խորությամբ։

Նույն ակունքներն ունեն «Մթնաձորում» տեղավորված պատկերները կամ իրեն՝ հեղինակի խոսքով ասած քրոնիկոնները, որոնք Բակունցը համարում էր անհրաժեշտություն գրականության համար։ Դրանք իրական դեպքեր են, նույնքան իրական, որքան Թումանյանի «Մերոնը» շարքի գործերը. ավելին, եթե կարելի է այսպես ասել, դրանք գերիրական են, գերհավաստի։

Չկա բաղարաբնակ, ծագումով գյուղացի հայ, որին պատահած չլինեն կյանքում Թումանյանի քեռի Խեչանը իր հանրահռչակ «բա ի՞նչ անեն»-ով, Դարո բիձան. չես գտնի մեկին ավագ և միջին սերնդի մարդկանցից, որին զարմացնի Նեսոյի բարարաղնիսը։

Առանց տատանվելու նույնը կարելի է ասել այն անեկդոտիկ, հաճախ ողբալի արարքների մասին, որոնք վերարտադրված են Բակունցի «Մրոց», «Գյուլբահարի համար», «Ծիրանի տափ», «Խաղլացավ» և այլ գործերում։

Հայկական այդ ո՞ր գյուղում է, որ առաջին մեքենան չի ընդունվել այնպես, ինչպես Մրոցում. հարայ գցած, մեծ ու փոքր իրար խառնված, ասես աչք դարձած՝ խռնված մեքենայի շուրջը։ Այդ որտե՞ղ է, որ չեն եղել Մրոցի բնակիչների ենթադրություններն հիշեցնող ենթադրություններ, որ չեն գտնվել գիտակ ձևացող մեկը կամ երկուսը Մրոցի նախագահի պես, նրա նման անեկդոտիկ վիճակով, որտե՞ղ է առաջին պահին տրիերն ընդունվել որպես տրիեր. տրակտորը տրակտոր։

Իսկ դրմբոնցիների սարքած պատմությո՞ւնը տեր Մարուքեի գլխին («Գյուլբահարի համար»)։ Հազիվ թե կարելի լինի գտնել որևէ գյուղ, որ քսանական թվականների սկզբներին, կամ հենց հետո, ունեցած չլինի իր տեր կամ պարոն Մարուքեն, որ ընկած չլինի դրմբոնցիների դրությունն հիշեցնող անհարմար դրության մեջ։ Քսանական թվականների սկզբներին, երբ ժողովուրդը դեռևս չգիտեր ինչպես օգտվել իրեն տրված իրավունքներից, չգիտեր որոնք են այդ իրավունքները, և շշկլած կարող էր զարմանալ. թե ինչպես կարող է դատարանն արդարացնել Մարուքեին, եթե ամբողջ գյուղը վկայում է նրա պիղծ կապը Գյուլբահարի հետ, և ընդհակառակը մեղավոր ճանաչել Յախշուն, որ գյուղի կամքով հսկել ու հայտնաբերել է նրանց կապը։

Մի ամբողջ գյուղի մասնակցություն դեպքերին, ավելի ճիշտ, նրա ողջ կազմի վերաբերմունքը այս կամ այն երևույթին, և դրան զուգորդող հեղինակային վերաբերմունք այդ իսկ վերաբերմունքի, աշխարհընկալման նկատմամբ. այս է բակունցյան պատկեր-քրոնիկոնների ընդհանուր կառուցվածքը։

Այս եղանակով է Բակունցի գործերում հորդում գյուղական աշխարհազգացման տարերքը նահապետականության վերջնական կործանման ցնցումներով ու ցավով, միամտությամբ, սահմանափակությամբ, թուլություններով, բայց և ուժով. ասես բնատուր մարդկայնությամբ, բարին զգալու, ափսոսալու, նրա համար խիզախելու կորովով։ Եվ այս ամենը միասին, կողք-կողքի, իրար հետ միախառնված, օրգանական մի միաձույլ ներդաշնակությամբ։

Այսպես բազմազան տարրերից է հյուսված նաև իրեն Բակունցի վերաբերմունքը. սեր. ակնածանք, հպարտություն և այդ հպարտության միջից պոռթկացող ցավ. թախիծ, որ հեշտությամբ կարող է փոխվել հումորի, ձաղկող ծիծաղի, հնչիլ լիահնչյուն շեփորով կամ ցավով ու ափսոսանքով, և այդ ամենը նույն երկում, գեղարվեստական նույն հյուսվածքի մեջ։

Թերևս հենց այստեղ էլ հարկ է խոսել Բակունցի վերաբերմունքի մասին դեպի գյուղական ավանդական կյանքը, մի շատ նուրբ հարց, որ Լապես չափազանց կարևոր է Բակունցի ողջ վաստակի գնահատության համար։

Ասում ես ավանդական կյանք և անմիջապես առջևդ է դուրս գալիս Մինա բիբին՝ աղերսալից հայացքով, փլված սրտով, մոլորված, իր մեկ հատիկ բաղձանքով՝ խորթ, օտար չլինի իրեն, իր հոգուն, իր աշխարհին հարազատ թոռ։ Նույնքան բնական, նույնքան սրտառուչ մի ցանկություն, որքան խեղճ Դիքորի ցանկությունն է. «Լ. մեր աղբրի ջրիցն եմ ուզում», «ես իմ նանին եմ ուզում»։

Տենչում է Մինան, և ո՞ր տատն ու պապը չեն տենչում այդ, ո՞ր հայրն ու մայրը, սերնդասիրության ավանդական զգացմունքով, որ մարդկային ամենաազնիվ զգացմունքներից մեկն է՝ կյանքն իմաստավորող, ասես, մարդուն կյանքի, ժողովրդի հավերժության հետ ձուլող, մահվան հետ հաշտեցնող։

Տենչում է, և ի՞նչ մեղք ունի Մինան, որ իրեն նման լինել՝ նշանակում է աթարի և ծխի բուրմունք ունենալ, ճաքճքված կոշտացած ձեռքեր, աստվածապաշտ լինել և աստվածավախ։ Այս է Մինան, և նրա թոռը արդեն այդպիսին չէ և չի էլ ուզում լինել։

Եվ ահա հյուսվում է մարդկային ցնցող մի ողբերգություն, որտեղ հակասական բնույթով դալիս խաչաձևվում են երկու մոտիվ, երկու թեմա՝ հեղինակային երկու վերաբերմունքով։ Ավանդական հետամնաց կյանքի, տգիտության կործանման անհրաժեշտության մոտիվը և այն, որ այդ կյանքը որպես այդպիսին վերացական, ինքնին մի բան չէ, այն գոյություն ունի իր կոնկրետ կրողներով, Մինա բիբու նման ազնիվ, բարձր հոգի և ձգտումներ ունեցող մարդկանցով, որոնց ապրած կրկնակի ողբերգությունը չի կարող չարժանանալ ամենախորը կարեկցանքի։

Մանավանդ, երբ այդ Մինա բիբին գուցե քո մայրն է, նրա թոռը քո որդին կամ դուստրը. և դու մեջտեղ կանգնած հազար թելերով կապված ես և մեկի հետ, և մյուսի՝ քո հոգով, քո աշխարհով և ամենակարևորը՝ մանավանդ, երբ դու գրող ես, և պարտավոր ես, կոչված ես պատասխան տալ այդ հարցերին ոչ միայն պատմության անունից, այլև մարդկայնության։ Իսկ Բա-

կունցի հերոսները, բոլորն էլ Մինա բիրու նման նրա հարազատներն են, հարազատ հայ գյուղացիներ ու գեղջկուհիներ, հողի և աշխատանքի հասարակ ազնիվ մարդիկ։

«Մթնաձորի» բոլոր էջերում, բոլոր հերոսների կողքից, թիկունքից կանգնած է Ակսելը՝ իր ժողովրդի հետ ձուլված բաղաքացին, գրողը, իր ժողովրդի պես լայնասիրտ ու մարդկային։

«Մթնաձորով» այսպես սկսեց Ակսելը իր ճանապարհը և այսպես էլ շարունակեց նա՝ հաստատուն, անշեղ, մաքառելով իր արվեստի համար։ Թումանյանի և Իսահակյանի զարմից էր նա արվեստագետի իր կերտվածքով, և դժվար էր, համարյա անհնարին, շեղվելը այդ կերտվածքից։

Աշխարհազգացման արձակ է, Բակունցի արձակը, եթե ընդունելու լինենք, որ այդ բառով է, բնութագրվում և առանձնացվում Թումանյանի անգնահատելի մեծությունը։ Աշխարհազգացման արձակ է այն, ճիշտ նույն պրոցեսի բերումով և նույն յուրահատկություններով, որոնցով բնութագրվում է մեր օրերի առաջավոր գաղափարներով տոգորված համաշխարհային արձակը։

ВСТУПЛЕНИЕ БАКУНЦА В ЛИТЕРАТУРУ

А. Г. ЗАКАРЯН

(Резюме)

Рассказы сборника «Мтнадзор» ознаменовали вступление Акселя Бакунца в советскую армянскую литературу. Они обогатили армянскую прозу повествованием о драматических событиях жизни армянского народа, вступившего в советскую эпоху.

Проза Бакунца — проза мировосприятия, мироощущения; ее искусство связано с туманяновскими традициями эпического повествования о людях крестьянского мира. Отсюда главная особенность прозы Бакунца — эпическая система раскрытия соотношения человека и мира, человеческой судьбы и психологии. Это особенность не только «Мтнадзора», но и всего бакунцевского творчества.